Երևանի Լեոյի անվան համար 65 դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա – Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառությունը գրական նյութի ուսումնասիրության ժամանակ

Ուսուցիչ՝ Ն.Ադամյան/Երևանի Ղ.Աղայանի անվան հ.63 դպրոց/

Ղեկավար՝ Ա.Աբելյան

Երևան 2022

Բովանդակություն

1.Ներածություն

2.Համագործակցային ուսուցման մեթոդներ

3.Եզրակացություն

4.Գրականության ցանկ

Ներածություն

Այլընտրանքային մանկավարժական մոտեցումներից է համագործակցային ուսուցումը,որը ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման կարևորագույն պայմանը խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկապվածության ապահովումն է:

Համագործակցային ուսուցման տարրերը հինգն են՝

1.Դրական փոխկախվածություն:Երբ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու,խրախուսելու, աջակցելու մթնոլորտ:Սովորողի ջանքերն ուղղվում են համատեղ ընդհանուր նպատակին հասնելուն:Փոխկախվածությունը նպաստում է սովորողների հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խնբի անդամների փոխհարաբերությունների լավացմանը:

2.Դեմ առ դեմ,խթանող փոխազդեցություն:Վերոնշյալ մեթոդի կիրառման ժամանակ խմբի անդամները համագործակցում են,փոխանակում տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ,մշակում և վերլուծում են տեղեկությունը,ապահովում են հետադարձ կապ,միմյանց քաջալերում և աջակցում են ընդհանուր նպատակին հասնելու համար:

3.Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն:Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու,կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար:Անհատը խմբի ման է և գաղափարներով ու մտքերով կիսվում է մյուս անդամների հետ,պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքը:

4.Սոցիալական հմտություններ:Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր,այն է ՝անաղմուկ աշխատանք,ներկայություն ոցջ աշխատանքի ընթացքում,խոսողին հետևել և առաջադրանքը կատարելիս ունենալ ներդրում:

5.Խմբային գործընթաց: Սա խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների,համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է,որը զարգացնում է սոցիալական հմտությունները,ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Այս տարրերը ներկայացված են ՝ըստ պրոֆեսորներ Ջոնսոնների:Հետագայում այս հինգ տարրերին ավելացվեց վեցերորդ տարրը՝փոխգործուն,ինտերակտիվ առաջադրանքը ,որի կարևոր չափանիշն այն է,որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսուցման մերոդներն են.

1.Աշակերտների թիմային առաջադիմություն:

2.Խճանկար/Ջիգսո/:

3.Շրջագայություն պատկերասրահում:

4.Երեք բանալի և մեկ կողպեք:

5.Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Գոյություն ունեն նաև բազմաթիվ արագ գործադրվող համագործակցային կարճ մեթոդներ,որոնք նպաստում են ուսումնական գործընթացում սովորողների համագործակցությանը:Այդ պարզ մեթոդները հաճախ հանդիսանում են գերազանց միջոցներ՝ աշակերտներին զույգերով կամ փոքր խմբերով աշխատելուն վարժեցնելու համար:

1.<u>**Աշակերտների թիմային առաջադիմության մերոդ**</u>/ մեթոդը մշակել և ներկայացրել է պրոֆեսոր Ռոբերտ Սլավինը Ջոն Հոպկինսի հա<u>մալսարանի</u>ց/:

Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը:Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը:Այն լուրջ խթան է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար,քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի ընդհանուր արդյունքում:Միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ պահպանեն և բարելավեն իրենց նախորդ ցուցանիշները:

Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է ,որ հնարավորություն է տալիս գնահատելու և' առանձին աշակերտների,և' խմբերին:

Այս մեթոդը համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար : Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը : Մեթոդի գործածության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր,այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:Այս մեթոդը կարելի է կիրառել,օրինակ, 11-րդ դասարանում Հովհաննես Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> կամ <<Անուշ>> պոեմները ուսումնասիրելիս:Նյութը ուսուցիչ ներկայացնում է ավանդական մեթոդով,ապա կիրառում այս մեթոդը:

<u>Ընթացքը/նկարագրություն/</u> – Դաս-դասարանական ավանդական մեթոդով նոր թեման

բացատրելուց հետո ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 հոգանոց տարասեռ խմբերի՝յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց ,միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների,ապահովելով նաև տղա-աղջիկ հավասարությունը/հնարավորինս/:

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով ,որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված ,երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը :Օրինակ՝ 1-ին խումբը պետք է ներկայացնի <<Թմկաբերդի առումը>>պոեմի պատմական նյութը.եղել է արդյո՞ք նման միջադեպ,ո՞վ է Նադիր շահը և այլն/կարող են օգտվել ՏՀՏ միջոցներից,Գտնել Թմուկ բերդի մասին տեղեկություններ՝պատմական և աշխարհագրական/: 2-րդ խումբը պետք է բնութագրի Թաթուլ իշխանին և մեկնաբանի,թե ինչու էր Թաթուլն այդքան ուժեղ ու աննկուն,որն էր նրան հայրենասիրության մղող ուժը:3-րդ խումբ պետք է ներկայացնի Թմկա տիրուհուն և կարծիք ձևավորի ընդհանրապես հայ կնոջ վերաբերյալ/ոչ միայն այս ստեղծագործության շրջանակներում/:4-րդ խումբը մեկնաբանում է<<Գործն է անմահ>>թևավոր խոսքը,բերում այս խոսքը հաստատող օրինակներ,կատարում եզրահանգումներ/խումբը կարող է զուգահեռներ անցկացնել մեր օրերի և այն ժամանակների միջև/: Տրվում է ժամանակ ,որը կառավարում էուսուցիչը՝ելնելով նյութի ծավալից ևսովորողների հնարավորություններից: Ժամանակը լրանալուց հետո ուսուցիչը ստուգում է նյութի յուրացման աստիճանը,որի ընթացքում,սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց.յուրաքանցյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը/ներկայացնում նյութը/:

Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է,որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում:Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը արվում է ուսուցչի հայեցողությամբ: Օրինակ՝յուրաքանչյուր պատասխանը գնահատվում է առավելագույնը երկու միավոր և բոլորի գնահատականների հանրագումարը դառնում է ամբողջ խմբի գնահատականը:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էականն այն է ,որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար ,քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի դեպքում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին՝ բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել և բարելավել իրենց նախորդ ցուցանիշները:Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

2.<u>**Խճանկար/Ջիգսո**</u>/:Այս մեթոդը ևս համագործակցային ուսուցման մեթոդ է ,որը մշակել և փորձարկել է Էլիոթ Արոնսոնն իր գործընկերների հետ Տեխասի համալսարանից: Այնուհետև այս մեթոդը լրամշակվել է պրոֆեսոր Սլավինի կողմից/Հոպկինսի համալսարան/:

Այս մեթոդի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի,որոշակի ասպեկտի,որոշակի հիմնախնդիրների մեջ և ուսուցանում են դասընկերներին: Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության

մեթոդից տարբերվում է նրանով,որ սովորողները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերն են.

- Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքագրում
- Աշխատանք փորձագիտական խմբում
- Աշխատանք ուսումնական խմբում
- Ավարտական աշխատանք
- Ամփոփում

Ընթացքը /նկարագրություն/

1.Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքագրում: Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի:Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի<< փորձագետ>>:Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման,հավաքում տեղեկատվություն:Օրինակ՝ Իններորդ դասարանում <<Մովսես Խորենացի.Վիպերգեր>>թեման ուսումնասիրելիս յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է ուսումնասիրել վիպերգերից մեկը,զուգահեռներ տանել պատմական ժամանակաշրջանի հետ:

2.Աշխատանք փորձագիտական խմբում:Այս փուլում փորձագիտական խմբերի սովորողները հանեմատում են և հարստացնում իրենց նյութերը:<<Փորձագետները>. պատմում են վիպերգերը,ներկայացնում յուրաքանչյուրի ժամանակաշրջանը,հերոսներին,անցկացնում զուգահեռներ:

3.Աշխատանք ուսումնական խմբում: Այս փուլում յուրաքանչյուր <<փորձագետ>> հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման /1-ին խումբը՝<<Հայկ և Բել >>, 2-րդը ՝ <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>>, 3-րդը ՝<<Տիգրան և Աժդահակ>> , 4-րդը՝<<Արտաշես և Արտավազդ>>/:

4.Ավարտական աշխատանք:Սովորողները անհատական թեմատիկ աշխատանք են հանձնում ամբողջ թեմայից/կարող է լինել վերլուծական շարադրություն կամ թեստային աշխատանք/:

5.Ամփոփում:Արդյունքներն ամփոփվում են՝ ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Վերոնշյալ փուլերով անցնելիս ուսուցիչը պետք է կատարի հետևյալ քայլերը.

Քայլ 1: Հենակետային խմբերի ձևավորում:Խմբերը ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի ժամանակ կատարվող խմբերի բաժանման ձևից:Այդկերպ կձևավորվեն ինչպես առաջադիմությամբ,այնպես էլ աղջիկ-տղա համաչափ բաժանումով տարասեռ խմբեր:Խմբերը ստեղծվում են

նպատակային՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները: Խմբերի ձևավորումից հետո հայտարարվում են խմբային աշխատանքի կանոնները:Օրինակ՝

1.Առաջադրանքի իրենց հանձնարարված հատվածն ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ,մինչև բոլորն ավարտեն:

2.Խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է ,որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը/այս դեպքում կարողանան պատմել վիպերգը գեղեցիկ ,մաքուր հայերենով/:

3.Եթե կան հարցեր, անհասկանալի հատվածներ , բառեր /օրինակ ՝դիակապուտ , հարալեզ և այլ բառեր/,ապա աշակերտը նախ դիմում է իր թիմակիցների օգնությանը,հետո,եթե դրա կարիքը կա,նաև ուսուցչին:

Կանոններն ընդունելուց հետո ուսուցիչը ձևակերպում է առաջադրանքը:Հիմնական խմբերի անդամները ,միմյանց աջակցելով,ընթերցում են ամբողջ նյութը,ապա քննարկում անհասկանալի բառերը,հատվածները:Այս մեթոդը կարելի է կիրառել նաև 6-րդ դասարանում Մուշեղ Գալշոյանի <<Կռունկ>> դասը ուսումնասիրելիս:

Քայլ 2:Փորձագիտական խմբերի ձևավորումը:Երբ աշակերտները ծանոթանում են ամբողջ նյութին ,հիմնական/մայր/ խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է առաջադրանքը և փորձագիտական թերթիկը:Առաջադրանքը կարող է լինել նյութի առանձին հատվածի ուսումնասիրությունը/Օրինակ՝<<Կռունկ>> ժողովրդական երգը,Կոմիտասի կյանքը/,խնդրի որոշակի ասպեկտի վրա կենտրոնացումը:Առաջադրանքը ստանալուց հետո աշակերտները հավաքում են նյութերը իրենց ենթաթեմայի վերաբերյալ:Ապա փորձագիտական խմբի անդամների հետ քննարկում են իրենց նյութերը,կատարում ճշգրտումներ:Փորձագիտական խմբի անդամները որոշում են ,թե ինչ մեթոդներ,մատուցման եղանակներ , աղյուսակներ /քառաբաժան, T-աձև աղյուսակ,Վենի դիագրամ և այլն/ են օգտագործելու իրենց մայր խմբերի անդամներին սովորեցնելու ընթացքում:Փորձագիտական խմբերում նույնպես պետք է ընդգրկել առաջադիմությամբ տարասեռ աշակերտների:

Կարևոր է նաև փորձագիտական թերթիկների մշակումը: Ճիշտ մշակված թերթիկները աշակերտներին կօգնեն կենտրոնանալ հիմնական հարցերի վրա և չշեղվել նյութից:

Օրինակ՝9-րդ դասարանում վիպերգերն ուսումնասիրելիս յուրաքանչյուր փորձագիտական խմբի հանձնարարվում է ուսումնասիրել մեկ վիպերգ/ինչպես արդեն նշել էինք/:Բոլոր խմբերին տրվում է փորձագիտական թերթիկ.

Փորձագիտական թերթիկի նմուշ.

1.Ներկայացնել տվյալ վիպերգի ժամանակաշրջանը:

2.Ո՞ւմ դեմ էին պայքարում հայերը տվյալ վիպերգում:

3.Բնութագրել վիպերգի գլխավոր հերոսներին:

4.Համեմատել դրական և բացասական հերոսներին:

Հիմք ընդունելով այս թերթիկը՝ փորձագիտական բոլոր խմբերը կատարում են իրենց տրված աշխատանքը:

Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները վերադառնում են իրենց հենակետային խմբեր:Յուրաքանչյուր <<փորձագետ>> սովորեցնում է իր ենթաթեման, պարզում,թե որքանով են իր դասընկերները յուրացրել իր տված նյութը՝ հանդես գալով ուսուցանողի,սովորեցնողի դերում:

Քայլ 3:Ամփոփիչ փուլ:այն առաջանում է ,երբ համագործակցային խմբերը 4-5 րոպեի ընթացքում ամբողջ դասարանին ներկայացնում են թեման ՝ ներկայացման համար ընտրելով իրենց նախընտրելի ձևը/Ներկայացնել կարելի է սահիկաշարերով,պատի թերթի միջոցով,փոքրիկ դասախոսությամբ և այլն/:

Քայլ3:Ամփոփիչ փուլ.այս փուլում ուսուցիչը տարբեր հանձնարարություններ կարող է տալ:Օրինակ՝<<Բացատրել,թե որն է ամենակարևորը տվյալ վիպերգում>>,կամ <<Հակիրճ ներկայացնել վիպերգի հիմնական գաղափարը>> ,կամ <<Ինչի՞ վրա ավելի մեծ ուշադրություն դարձրեց խումբը և ինչու՞>>:

Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

Քայլ 4:Գնահատում: Խճանկար մեթոդի ժամանակ գնահատումը պետք է իրականացնել երեք մակարդակով:

Առաջինը՝պարզել,թե որքանով են խմբերն արդյունավետ գործում,որքանով են բարելավվել սովորողների համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները:

Երկրորդը՝որքանով են աշակերտները առաջադիմել նյութը ուսումնասիրելու և այն իրենց դասընկերներին սովորեցնելու գործում:

Երրորդը՝որքանով է յուրաքանչյուր աշակերտ յուրացրել ուսումնական նյութը,առաջադիմել:

Խմբային գործընթացի գնահատում: Խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել, թե որքանով են սովորողները արդյունավետ գործել որպես խմբի անդամներ:Սա իր մեջ ներառում է խոսելու,խմբին օգնելու,աջակցելու հմտությունները:

Գնահատելու նպատակով կարելի է ճշտել , թե արդյոք խմբի բոլոր անդամներն էին մասնակցում աշխատանքներին ,կամ կային արդյոք խմբում գերակշռող աշակերտներ /լիդերներ/,կամ աջակցող էր արդյոք հաղորդակցումը:

Փորձագիտական աշխատանքի գնահատում:Այս դեպքում գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանք կատարելու հմտությունները:Օրինակ՝ուսումնական նյութերի ,սկզբնաղբյուրների,մոդելների հետ աշխատելու,նկարագրելու միջոցով ձեռքի տակ եղած նյութը մշակելու և դասընկերներին սովորեցնելու հմտությունները:

Նյութի բովանդակության յուրացման գնահատում:Գնահատման այս ձևը կիրառելիս անհրաժեշտ է օգտագործել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդում ներկայացված գնահատման նմուշը: Գնահատվում են և' առանձին աշակերտները,և' խմբերը: Վերջում անհրաժեշտ է ամփոփել արդյունքները ,խրախուսել առաջադիմած աշակերտներին ու խմբերին:

3.<u>Շրջագայություն պատկերասրահում</u>:Այս մեթոդը Խճանկար մեթոդի տարատեսակ է ,որի նպատակն է փոխանակել տեղեկություններ,մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ,ինչպես նաև զարգացնել լսելու,ինքնուրույն աշխատելու,քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու,ցածրաձայն խոսելու,կատարած աշխատանքը ներկայացնելու հմտություններ:

<u>Ընթացքը/նկարագրություն</u>/

1.Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս է դրանցից մեկը՝ինքնուրույն ուսումնասիրելու:Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից:Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:Օրինակ՝ 10-րդ դասարանում այս մեթոդը կարելի է կիրառել <<Սասնա ծռեր>> էպոսի ուսուցման ժամանակ:

2.Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ուսումնական նյութի ՝ իրենց տրված մասի վրա/ցանկալի է ,որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջադրվեն/: Օրինակ՝ 1.Առաջին խումբը էպոսում գտնում է չափազանցություններ:

2. Երկրորդ խումբը՝էպոսի հերոսների քաջագործությունները:

3. Երրորդ խումբը՝էպոսի հերոսներին նկարագրող զավեշտալի կամ ծաղրական նկարագրություններ:

4. Չորրորդ խումբը բնութագրում է կին հերոսներին:

5. Հինգերորդ խումբը՝էպոսի հերոսների շինարարական գործունեությունը:

Ստացված արդյունքները մշակում և ներկայացնում են նկարների,կոլաժի,շարժի տեսքով:

3.Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի/կարելի է նաև միջանցքի/ պատերին՝ ստեղծելով<<պատկերասրահ>>:

4.Խմբի ներսում աշակերտները հաշվում են մեկից չորսը և կազմում չորս նոր խումբ `ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների/բոլոր<<1>> համարի աշակերտները ձևավորում են առաջին խումբը,<<2>>-ները `երկրորդ խումբը,,<<3>>-ները` երրորդ խումբը,<<4>>-ները` չորրորդ խումբը:

5.Այս նոր խմբերը շրջում են <<պատկերասրահում>>`կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ ,և տվյալ խմբի այն անդամը ,որ մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը , կատարում է գիդի դեր ,մանրամասն ներկայացնում խմբի աշխատանքը , պատասխանում խմբի հարցերին ևմասնակիցների առաջարկությունների համաձայն կատարում լրացումներ կամ ուղղումներ:Շրջագայությունն ավարտվում է այն ժամանակ ,երբ բոլոր խմբերը,միևնույն ուղղությամբ <<սահելով>> ցուցանմուշների մոտով, ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6.Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական/մայր/ խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում `այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:.

<u>4.Երեք բանալի եւ մեկ կողպեք</u>:Այս մեթոդը կիրառելիս աշխատանքը կարելի է կատարել զույգերով/նաև`խմբերով/:Այն կիրառվում է այնպիսի դասերի իմաստի ընկալման /կշռադատման/փուլում,որոնք բավականին ծավալուն են,նույն նյութին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան : Այս մեթոդով աշխատելիս սովորողների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտությունը, ինչպես նաև համագործակցելու,իր ընտրությունը հիմնավորելու կարողությունը:Այս մեթոդը կարելի է կիրառել Ռաֆֆու<<Սամվել>>պատմավեպը ուսումնասիրելիս:

Օրինակ` 1.Երեք բան/բնավորության գիծ կամ հատկանիշ/,որ քեզ դուր է գալիս Սամվելի կերպարում:

2.Ի՞նչ կփոխեիր Սամվելի կերպարում:

3.Ի՞նչ նոր վերջաբան կգրեիր:

Տրվում է հրահանգ.<<Հիմնավորի՛ր>>:Դասի ընթացքում աշակերտների ինքնուրույն

աշխատանքին անհրաժեշտ է հնարավորինս շատ ժամանակ հատկացնել ,զարգացնել աշակերտների մոտ ինքնուրուն աշխատանք կատարելու հմտություններն ու կարողությունները: Ինքնուրույն աշխատելուն նպաստում է <<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդը: Կարելի է <<Սամվել>> վեպից կամ նրա գլուխներից մեկից ընտրել բանալի բառեր ` հայր, հայրենիք , պատիվ,սեր,ընտանիք:Զույգերին տալ հինգ րոպե ժամանակ,որպեսզի ուղեղային գրոհի միջոցով տան այդ բառ-եզրույթների ընդհանուր մեկնաբանությունը և ենթադրեն,թե դրանք ինչ կապ ունեն,օրինակ, <<Սամվել>>վեպի <<Արաքսի որոգայթներ>> գլխի հետ:Սովորողների եզրահանգումները,շարադրանքը կհամարվեն բառ –բանալիների կողպեքը:

5.Հինգրոպեանոց ազատ շարադրանք:Հինգրոպեանոց ազատ շարադրանք մեթոդը կարող է կիրառվել խթանման փուլում , ինչպես նաև կշռադատման փուլում ՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման ,օրինակ՝ Մուրացանի <<Գևորգ Մարզպետունի>> պատմավեպը կամ Ռաֆֆու<<Սամվել>>-ը:Տալիս ենք հարցեր.<<Ի՞նչ է հայրենասիրությունը>>կամ<<Ու՞մ կուզեիր նմանվել>>/<<Սամվել>>-ում ընտրել Սամվելին և Մուշեղ Մամիկոնյանին,<<Գևորգ Մարզպետունի>>-ում ՝ Գևորգ Մարզպետունուն և Սահակ Սևադային կամ Ցլիկ Ամրամին և Աշոտ Երկաթին/:Առաջարկում ենք հինգ րոպեի ընթացքում շարադրել իրենց մտքերը,որից հետո դադարեցնում ենք աշխատանքը և ունկնդրում սովորողների աշխատանքները/շարադրանքները/:Գնահատել կարելի է խրախուսական խոսք ասելով:

6.Խմբային հետազոտության մեթոդ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա : Ի տարբերություն մյուս մեթոդների ՝խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:Այս մեթոդը մեզ առաջարկել է պրոֆեսոր Շարոնը Թել-Ավիվի համալսարանից՝չնայած որ մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարասկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուիի տեսությունից : Վերջինս գտնում էր ,որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում,որպեսզի հետագայում այդ ամենը աշակերտները կիրառեն կյանքում:

Խմբային հետազոտության մեթոդը կիրառող ուսուցիչը հետապնդում է երեք փոխկապակցված նպատակ.

1.Խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրներ:

2.Ստեղծել պայմաններ,որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութը:

3.Սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

-11-

Այսպիսով՝այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը ,զարգանում են աշակերտների՝ հետազոտելու և համակարգելու հմտությունները:

Ընթացքը/նկարագրությունը/

Քայլ 1: Խմբերի ձևավորում և թեմայի ընտրություն:Կարելի է փոխել խմբերի ձևավորման և թեմայի ընտրության հերթականությունը:Որոշ դեպքերում ուսուցիչը կարող է ընտրել թեմաները,ապա նոր,ըստ աշակերտների նախասիրությունների և հետաքրքրությունների, ձևավորել խմբեր:Այլընտրանքն այն է ,որ նախ ձևավորվում են խմբերը,ապա սովորողներն իրենք են ընտրում հետազոտության թեման : Այս տարբերակը սովորողներին հնարավորություն է տալիս զարգացնելու դասընկերների հետ բանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները : Երբ խմբերը ձևավորված են և հետազոտության թեմաները ընտրված,անհրաժեշտ է անցկացնել թիմ/խումբ/ ձևավորող վարժություն,որը կարևոր միջոց է համագործակցային ուսուցումը արդյունավետ դարձնելու ճանապարհին: Ստորև ներկայացնենք թիմ ձևավորող վարժությունների օրինակներ՝ ելնելով ուսումնասիրության նյութից՝Պարույր Սևակի <<Անլռելի զանգակատուն>>պոեմից:

1.Սիրած զբաղմունք – Խմբի անդամները միմյանց հացնում են իրենց սիրած երաժշտության,սպորտի,այլ նախասիրության մասին:

2.Կենսագրություն – Խմբի անդամները միմյանց հարցնում են կենսագրական տվյալներ /նաև,օրինակ,իրենց գերդաստանը ցեղասպանության ժամանակ որտեղի՞ց է գաղթել և իրենք ի՞նչ գիտեն այդ մասին/:

Քայլ 2:Խմբային ախատանքի պլանավորում: Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը. օրինակ՝<<Անլռելի զանգակատուն>>պոեմի ո՞ր ղողանջներն են ուսումնասիրելու կամ Կոմիտասի կյանքի ո՞ր շրջանը:Նախանշում են ռեսուրսները/<<Անլռելի զանգակատուն >>պոեմը,գրականագիտական և պատմական նյութ/,մշակում են պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի անդամները ուսումնասիրում են ամբողջական թեման ,ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարվում.ընդամենը որոշում են,թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու:Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի և յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա,ապա անհրաժեշտ է որոշել նաև ,թե ով է համակարգելու ենթախմբի աշխատանքները, ով է պատրաստելու թեմայի ամբողջական ներկայացումը:

Քայլ 3:Հետազոտության իրականացում: Սա խմբային հետազոտության ամենակարևոր փուլն է:Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ,հավաքում տեղեկատվություն:Այս փուլում ուսուցիչը պարբերաբար անցնում է խմբերով՝պարզելու համար ,թե ինչ են անում աշակերտները և ինչ աջակցության կարիք ունեն:

Քայլ 4: Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում: Աշակերտները այս փուլում վերլուծում և գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը ,իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց:Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա և թույլ չտալ շեղվել նյութից/թեմայից/:Արդյունավետ է խրախուսելով աջակցելը,որը ամենամարդասիրական

աջակցման ձևերից մեկն է:Կարելի է նաև խորհուրդ տալ, որպեսզի աշակերտները իրենց ստացած արդյունքները ներկայացնելիս պարբերաբար օգտվեն աղյուսակներից /քառաբաժան՝ ի'նչ գիտեիք եղեռնի և Կոմիտասի մասին,ի'նչ նոր բան իմացաք,սովորեցիք,ի'նչ զգացիք, ի'նչ եզրահանգումներ արեցիք/:

Քայլ 5:Հետազոտության արդյունքների ներկայացում:Այս փուլն ունի երկու հիմնական նպատակ.

- Լուսաբանել կատարված հետազոտությունը՝ Կոմիտասի կյանքը և 20-րդ դարասկզբի մեծ ողբերգությունը/Եղեռնը/ :
- Կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել թեման/Օրինակ՝ ղողանջները ներկայացնել՝ մեկնաբանելով և պատմական զուգահեռներ անցկացնելով: Կարդալ կամ անգիր արտասանել ընտրովի հատվածներ/:

Հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել և' բանավոր,և' գրավոր,և' գրավոր-բանավոր , և'պատկերային ձևով /օրինակ՝ սահիկաշարերով, ցուցապաստառներով , աբստրակտ նկարներով կամ կոլաժներով / :Նշենք ,որ նախընտրելի է բազմազան ձևերի օգտագործումը:

<u>Խմբային հետազոտության գնահատումը</u>:Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

ա/ հետազոտական հմտությունների

բ/ խմբային/համագործակցային/հմտությունների

գ/ բովանդակության յուրացման

Ավանդական մեթոդներով աշխատելիս ուսուցիչների հիմնական գործունեությունը սովորողների յուրացրած նյութի բովանդակության յուրացման աստիճանի ստուգումն է ու գնահատումը,իսկ համագործակցային եղանակով աշխատող ուսուցչի համար շատ կարևոր է պարզել,թե որքանով են աշակերտները յուրացրել իրենց հետազոտական նյութը/Օրինակ՝Պարույր Սևակի<<Անլռելի զանգակատուն>>պոեմը/: Ուսուցիչը կարող է

գնահատել՝ելնելով աշակերտների ներկայացրած նյութից:Կարելի է նաև աշակերտներին հարցաթերթիկ տալ, հանձնարարել թեմատիկ աշխատանք/ թեստային աշխատանք , ռեֆերատ կամ վերլուծական շարադրություն/:

Ստորև ներկայացնում ենք նաև գնահատման սանդղակ/ռուբրիկ/ , որը կարելի է օգտագործել համագործակցային ուսուցման մեթոդները կիրառելիս:

բազմազան հմտությունները նպաստում են խմբային աշխատանքն առավել արդյունավետ դարձնելուն: Ուստի այս հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն ու ձեռքբերումները:

Չափանիշ	1 -2 միավոր	3 -4 միավոր	5 -6 միավոր	7 -8 միավոր	9 -10 միավոր
Խոսքի բովանդակությունը	Խոսքը չի համապատասխանում, նյութին,մտքերը հասկանալի չի արտահայտում:	Խոսքը թեև կառուցված է նյութի շուրջ,բայց մտքերը համակարգված չեն,բառապաշարը աղքատիկ է:	Խոսքը համապատասխանում է նյութին, մտքերը ինքնուրույն է ձևակերպում, կիրառում է համապատասխան բառապաշար:	Խոսքը համապատասխանում է նյութին, կա պատճառահետևանքային կապ,տվեց լրացուցիչ տեղեկություններ:	Խոսքը համապատասխանում է նյութին,կա վերլուծական միտք.բերվեցի ն պարզաբանող օրինակներ:
Խոսքի կառուցվածքը	Միտքը կապակցված չէ,թռչում է մի մտքից մյուսը:	Նյութը ներկայացնում է մասմաս,կան լեզվական սխալներ:	Խոսքը գրքային ձևակերպումներով է,բայց ամբողջական, չկան լեզվական կոպիտ սխալներ:	Ինքնուրույն ձևակերպված մտքերով գրագետ խոսք է՝ հակիրճ կամ ընդարձակ:	Խոսքը ունի կուռ կառուցվածք,այն գրագետ է , տրամաբանված. ձևավորում է ընդարձակ և համառոտ նախադասություններ՝ հարազատ մնալով տեքստին:
Արտահայտման ձևը	Մտքերն արտահայտում է անվստահ,երկբայելով:	Խոսքը ձգձգված է,առկա են անհարկի դադարներ, կրկնությունները շատ են:	Խոսքը սահուն է, առկա են տրամաբանված դադարներ:	Մտքերը հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ:	Մտքերն արտահայտում է վստահ,համոզիչ՝ ներկայացնելով սեփական տեսակետ և ապահովելով լսարանի հետ կապ:

Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է ու այդ մեթոդները արդյունավետ կիրառելը դասապրոցեսում: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսումնառության և ուսուցման գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի համագործակցային մեթոդների կիրառությունը դասապրոցեսում ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային

Գրականության ցանկ

1.Համագործակցային ուսումնառություն.<<Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով>> ծրագրի համար պատրաստված ուղեցույց V

2.Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները,Երևան,<<Տիգրան Մեծ>>2004թ.

3.Հայի Պետրոսյան,Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ.Մոդուլային ուսումնական ձեռնարկ,Երևան,<<Ան-Ջոն>>2012թ.

4.Ա.Հովհաննիսյան,Կ.Հարությունյան,Մ.ԽրիմյանՍ.Խաչատրյան,Ն.Բայաթյան,Լ.Ալեքսանյան, Վ.Պուրուկուրու.Համագործակցային ուսուցում, Երևան ,<<Ամտարես>> հրատարակչություն , 2006թ.

5.ՏՀՏ տարբեր աղբյուրներ: